01/10.1/1916-09

2009-03-24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավորներ Հովհաննես Մարգարյան, Իշխան Խաչատրյան, Հեղինե Բիշարյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ։

1. Նախագծով նախատեսված՝

1) իրավական ակտերի (անհրաժեշտության դեպքում՝ նաև օժանդակ գրականության) անվանացանկի հրապարակումն օրենքով ամրագրելու անհրաժեշտությունը չկա, քանի որ մրցույթին մասնակցող կամ ատեստավորվող քաղաքացին իր ցանկությամբ կարող է ստանալ անհրաժեշտ իրավական ակտերը։ Ցանկերի տրամադրումը կարգավորված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի հունիսի 13-ի՝ «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 17-Ն և «Քաղաքացիական ծառայողի ատեստավորում անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 18-Ն որոշումներով,

2) հարցաշարերի հրապարակումը բովանդակային առումով ընդունելի չէ։ Հարկ է նկատի ունենալ, որ այդ դեպքում հարցազրույցը չի ծառայի նպատակին, այն է՝ մասնակցի ընկալելու, վերլուծելու, եզրակացություններ անելու, արտահայտվելու, ստրեսի կառավարման կարողությունների, մտածելու ոճի, կառավարչական հմտությունների ու մարդկային բազում այլ հատկանիշերի բացահայտմանը։ Մասնակցի՝ հարցերին տրված սերտած պա-

տասխանները թույլ չեն տա հանձնաժողովին հավաստի և լիարժեք գնահատել մասնակցի գիտելիքներն ու կարողությունները։

2. Նախագծի ընդունման դեպքում կվերանա «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված թեստավորման և հարցազրույցի միջոցով մրցույթների անցկացման փուլերի բովանդակային տարբերությունը։

Միաժամանակ հայտնում ենք, որ քաղաքացիական ծառայության համակարգում նախատեսվում են սկզբունքային փոփոխություններ, որոնց արդյունքում փոխվելու է նաև մրցույթների անցկացման կարգը։

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը առաջարկում է առայժմ ձեռնպահ մնալ ներկայացված օրենքի նախագծի ընդունումից։

Հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում ներկայացված օրենքի նախագիծը քննարկելիս հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահ Մանվել Բաղալյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

*Նախագիծ*
*Պ-532-16.02.2009-ՊԻ-010/0*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*
*ՕՐԵՆՔԸ*

**«Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին**

***Հոդված** 1.* Հայաստանի Հանրապետության 2001թ. դեկտեմբերի 27-ի ՀՕ-272 «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 14-րդ հոդվածի 8-րդ մասը երկրորդ պարբերությունից հետո լրացնել նոր պարբերությամբ հետեւյալ խմբագրությամբ.

«Հարցատոմսերը կազմվում են քաղաքացիական ծառայության խորհրդի սահմանած կարգով համակարգչում զետեղված հարցաշարից եւ դրանցից պատահական ընտրված առավելագույը 5 հարցերից։ Համակարգչում զետեղված հարցաշարը եւ հարցերի հիմքում ընկած իրավական ակտերի (անհրաժեշտության դեպքում՝ նաեւ օժանդակ գրականության) անվանացանկը հրապարակվում են սույն հոդվածի 7-րդ մասի երրորդ պարբերությամբ սահմանված կարգով։»։

***Հոդված** 2.* Օրենքի 19-րդ հոդվածի 10-րդ մասի երկրորդ պարբերությունը լրացնել նոր նախադասությամբ հետեւյալ խմբագրությամբ.

«Հարցատոմսերում զետեղված հարցերը եւ դրանց հիմքում ընկած իրավական ակտերի (անհրաժեշտության դեպքում՝ նաեւ օժանդակ գրականության) անվանացանկը պետք է տրամադրվի փաստաթղթային ատեստավորման ենթակա քաղաքացիական ծառայողներին հարցազրույցից առնվազն 15 օր առաջ։»։

***Հոդված** 3.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունման անհրաժեշտության**

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 14-ի 6-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի։ Նույն հոդվածի 7-րդ մասը թեստավորման փուլի համար պարտադիր է համարում թեստերի կազմման հիմքում դրված հարցաշարի հրապարակումը մրցույթն անցկացնելուց առնվազն մեկ ամիս առաջ։ Եվ, դատելով հոդվածի հետագա տրամաբանությունից, հարցազրույցի հարցաշարը եւ հարցատոմսերում ընդգրկված հարցերի քանակը մինչեւ հարցազրույցի անցկացման պահը մնում է գաղտնի։

Մեր կարծիքով եւ ինչպես ցույց է տալիս պրակտիկան, այս երեւույթն արհեստականորեն խոչընդոտում է մրցույթներին նախապատրաստվելիս։

«Քաղաքացիական ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը նպատակ է հետապնդում հնարավորություն ընձեռել մրցութային եւ

ատեստավորման գործընթացների մասնակիցներին նախօրոք ծանոթանալ հարցազրույցների հարցաշարերին։